# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
# № ԳՀԱՊՁԲ-20-10/5-4 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** **13.03.2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Ձվեր» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Գ. Վիրաբյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **17.12.2019թ.** կնքված № **ԳՀԱՊՁԲ-20-10/5-4** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին(այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **790,400 (յոթ հարյուր իննսուն հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի **3.3** կետով նախատեսված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան **10.12.2020թ.**:

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿԾ և ԱԲ վարչությունը:**

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ
Ն. ՅՈԼՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Ձվեր» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մելքումով 78
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052122138341001
ՀՎՀՀ 07620298
գլխավոր տնօրեն
Գ. ՎԻՐԱԲՅԱՆ

Հավելված N 1
N ԳՅԱՊՁԲ-20-10/5-4 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ | Մատակարարումը՝ 2020թ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ |
| 9. | Ավտոմատ անջատիչներ (Էլեկտրական եռաֆազ ավտոմատ անջատիչ 40Ա) | հատ | 20 | 1,150 | 23,000 | 20 |
| 10 | Ավտոմատ անջատիչներ (Էլեկտրական եռաֆազ ավտոմատ անջատիչ 50Ա) | հատ | 20 | 1,670 | 33,400 | 20 |
| 29. | Էլեկտրական խրոց՝ միաբևեռ, հողանցումով, - 16Ա | հատ | 2,000 | 167 | 334,000 | 2,000 |
| 32. | Էլեկտրական տաքացուցիչ՝ ջերմային կարգավորիչով (Էլեկտրական տաքացուցիչ , ջերմային կարգավորիչով 1.2 Կվտ (տեն)) | հատ | 200 | 2000 | 400,000 | 200 |

**Գնորդ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**Վաճառող**
«Զվեր» ՍՊԸ
գլխավոր տնօրեն

Գ. ՎԻՐԱԲՅԱՆ

Հավելված N 2
N ԳՅԱՊՁԲ-20-10/5-4 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին/դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում` | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ. |
| 9. | Ավտոմատ անջատիչներ (Էլեկտրական եռաֆազ ավտոմատ անջատիչ 40Ա) | 31211180/530 | 23,000 | 23,000 | 23,000 | 23,000 | 23,000 | 23,000 | 23,000 | 23,000 | 23,000 | 23,000 |
| 10 | Ավտոմատ անջատիչներ (Էլեկտրական եռաֆազ ավտոմատ անջատիչ 50Ա) | 31211180/531 | 33,400 | 33,400 | 33,400 | 33,400 | 33,400 | 33,400 | 33,400 | 33,400 | 33,400 | 33,400 |
| 29. | Էլեկտրական խրոց՝ միաբևեռ, հողանցումով, - 16Ա | 31686100/503 | 334,000 | 334,000 | 334,000 | 334,000 | 334,000 | 334,000 | 334,000 | 334,000 | 334,000 | 334,000 |
| 32. | Էլեկտրական տաքացուցիչ՝ ջերմային կարգավորիչով (Էլեկտրական տաքացուցիչ , ջերմային կարգավորիչով 1.2 Կվտ (տեն)) | 39721500/508 | 400,000 | 400,000 | 400,000 | 400,000 | 400,000 | 400,000 | 400,000 | 400,000 | 400,000 | 400,000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Գնորդ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ
Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**Վաճառող**
«Զվեր» ՍՊԸ
գլխավոր տնօրեն
Գ. ՎԻՐԱԲՅԱՆ